

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԿՈՏ-ՆԱՇՁԲ-01/13-1/2

ք.Հրազդան

06.07.2013թ

ՀՀ Կոտայքի մարզպետարանը, գործելով մարզպետարանի կանոնադրությանը, ի դեմս Աշխատակազմի ղեկավար Ս.Գարեգինյանի այսուհետև՝ «Պատվիրատու» մի կողմից և «ՆՅՈՒ ԻՆԴԱՍՏՐԻՉ» ՍՊԸ-ն ի դեմս ՍՊԸ-ի տնօրեն Տ. Վիրաբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կապալառու», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությանը կատարել

Պոռշյան համայնքի դպրոցի շենքի վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները այսուհետև՝ Աշխատանք, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 Հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2013թ. օգոստոսի 12 -ը :

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով: Սույն պայմանագրում նշված Աշխատանքների կատարման ժամկետները կարող են փոփոխվել կողմերի համաձայնությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Պատվիրատուն իրավունք ունի

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի ներառյալ օրացուցային գրաֆիկի խախտման դեպքում պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժերը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.4 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Մինչև Աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը, ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ Կապալառուին վճարելով մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքին համարժեք գինը և հատուցել նրան պատճառված վնասները՝ առնվազն 10 օր առաջ տեղեկացնելով այդ մասին Կապալառուին.

3.1.5 Առանց Աշխատանքի արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա. Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքների կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ. Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը ներառյալ օրացուցային գրաֆիկը,

գ. Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին,